

երկտասարդ բժշկները այնպիսի սիրով և եռանդով աշխատում են ամեն կերպ ուսումնարանը բարձրացնելու, այնպես որ արևմտյան երկրացուց առաջադիմութեանց վրա, որ դրանց նայելիս մարդս ակամայ զգում է մի անշափ բաւականութիւն:

Հանդէսին ներկայ էին տեղացի հայ կանայք, պարոնայք և անցորդ (проѣзжіе) վաճառականներ, որոնք մեծ ուրախութեամբ առնում էին տոմսերը և շատ էին ուրախանում, երբ մի որ և իցէ բան էին տանում (չէ որ դա նշան է, որ ճակատագիրը դրանց լաւ աչքով է նայում):

Շատ նկատելի էր այն, որ այստեղ պաշտօն ունեցող հայերից ոչ մէկը ներկայ չէր հանդէսին: Ատում են, թէ դրանք վախում են հայոց ուսումնարանի մինչև անգամ չէմքը ուր դնել:

ՆԱՄԱԿ ՇԱՄԱՍՈՒՅ

Յուլիսի 11-ին

Պարբերական թերթերը կարգաւորված մարդ շատ անգամ պատահում է այնպիսի թղթակցութիւններ, որոնք զիջական օրական խնդիրներն են քննադատում և տեղական զեղծունեները հարուստում: Բայց կան քաղաքներ, որոնք փախչում են հասարակաց կարծիքից և գոնէ տարին մի քանի անգամ իրանց ներքին նշանաւոր խնդիրները չեն առաջարկում ընթերցող աշխարհի քննադատութեանը: Այսպիսի քաղաքներից մէկն է և մեր Շամախին: Տեսնելով մեր շամախեցոց անտարբերութիւնը դէպի իրանց կենսական խնդիրները՝ բարձր համարելի այս նամակովս սրանց ոչազրուցութիւնը դարձնել մի քանի անհրաժեշտ խնդիրների վրա, այն է ուսումնարանական, արուեստագործական և հասարակական ապահովութեան:

Յայտնի է արդէն՝ որ Շամախում թեմական առաջնորդ է նստում մի ժամանակ կար այստեղ մեծ թեմական ուսումնարան, որ պատրաստվում էին քահանայացու և ուսուցիչ երկտասարդներ: 1872 թ. մեծ երկրաշարժից յետոյ այս ուսումնարանի շինութիւնը կործանվեցաւ, մի տարի այս պատճառով ուսումնարանը խափանվեց, իսկ յետոյ իբրև մի ծխական դպրոց շարունակեց իր գոյութիւնը մինչև այսօր, որովհետև տեղականների ազդեցութեամբ ցամաքում են և ուսումնարանը անկարող է լինում իր թեմական լինելը շարունակել (թէ և թեմական անունը դեռ ունի կանոնադրութեան մէջ): Այս ինչ տարուայ ընթացքում ուսումնարանը ոչ մի բարձրում չէ ունենում, որովհետև իւրաքանչիւր տարի նոր նոր (գուցէ և անփորձ) ուսուցիչներ է ունենում, որոնց իւրաքանչիւրը իր խելքի կորած ուղղութիւնն է ուղղում տալ, բայց մի տարուայ աւելի չը մնալով, ուսումնարանը մի փորձաքարի է դարձնում, իսկ խեղճ աշակերտները ոչ մի պատրաստութիւն չունեցած՝ բաց են թողնում որպէս իրանց ուսման ընթացքը աւարտած: Այս տարուան այդ ուսումնարանից՝ դուրս եկած աշակերտները հազիւ թէ մի որ և է ուսումնարան մտնելու կամ կեանք մտնելու պատրաստութիւնը ունենային: Խեղճ տղայքը դեռ նոր էին սկսել ուսման ճաշակն առնել և այժմ պէտք է աւարտած համարվեն. գոնէ մի ամիսի տեղեկութիւն ստացած լինէին: Կրօնագիտութիւնից միայն սրբազան պատմութիւնը գիտէին, իսկ մեր Հայաստանեայց եկեղեցւոյ դաստիարակեան և արարողութիւնների վրա և ոչ մի տեղեկութիւն չունէին: Հայոց լեզուից քերականութեան տարրական մասը միայն գիտէին. միւս առարկաներից շատ քիչ տեղեկութիւններ կցկտուր: Թէ և երևում էր որ ուսուցիչները աշխատել են, իրանց ոյժերը գործ են դրել հաղորդած գիտութիւնը աշակերտներին մտքում տպաւորելու համար, բայց ինչ յառաջադիմութիւն կարող է ցոյց տալ մի անփորձ ուսուցիչ մի տարուայ ընթացքում առանց ծրագրի: Այս տարի և եղած ուսուցիչները թողնելին իրանց պաշտօնը և ուսումնարանը պէտք է սեպտեմբերից նոր ուսուցիչներ վարձէլ, իմ կարծիքով մեր ուսումնարանների անառաջադէմ լինելու պատճառները հենց ուսուցիչների շուտ շուտ փոփոխվելն է և ուսումնարանների անծրագիր լինելը: Շամախու թեմը, որ բազմաթիւ գիւղեր և քանի քաղաքներ ունի, մեծ կարօտութիւն ունի թէ ուսուցիչներ և թէ քահանաներ: Քառասուն գիւղերից, որոնք Շամախու գաւառում են միայն երկու երեքը ուսումնարան ունեն:

մէկուն էլ անցաւ տարի տէրութիւնը բացեց: Ամբողջ թեմի մտավաճառութեան արդիւնքը տեղոյս թեմական ուսումնարանին է, բայց վերջինս միայն քաղաքիս երկու եկեղեցուց է ըստանում: Միւս տեղերից դադարած են, ինչու... ուր են և ուսումնարանի միւս եկամուտները և ուսումնարանի 5000 ռուբլի դրամագումարը, որից 1000 ռուբլի միայն յիշվում է և սրա չափ եկամուտ:

Խորհուրդ կը տայինք մեր պատուելի շամախեցիներին մտանալ իրանց մի չնչին պատճառից յառաջ եկած երկպառակութիւնը և միանալով առաջնորդի հետ՝ բարեկարգել ուսումնարանը: Երկպառակութիւնը իրանց է վնաս:

Շամախում կայ և մի օրիորդական վարժարան, որը պահում է մի բաժանորդական ընկերութիւն: Օրիորդական վարժարանի անհրաժեշտութիւնը մեր քաղաքում անուրանալի է, որովհետև կինը դեռ ևս հարեմական դրութեան մէջ է Շամախում: Փառք և պատիւ այն անձանց, որոնք արդ վարժարանը հիմնել են. բայց ամօթ այն հասարակութեանը, որ չէ պահպանում այդ հիմնարկութիւնը: Այժմ էլ սորա անդամների երկպառակութեան պատճառով վարժարանի շինութիւնը կիսատ է մնացել, իսկ ուսումնարանը մի կերպ չեղածի հաշտով՝ շարունակում է իր գոյութիւնը: Թէ և սրբազան առաջնորդը ջանք է անում այդ վարժարանի համար, բայց հասարակութեան անտարբերութիւնը և սառնարտութիւնը դէպի այն՝ սրբազանի ջանքն չի դեր են հանում: Ատում են որ սրբազանի հակառակ կուսակցութիւնը աշխատել է համոզել շամախին, որ իրանց գաւառներին չը զրկեն վարժարանը, որպէս զի պատճառ ունենան սրբազանին մեղադրելու: Ես որան են վերաբերում այս տարուան օրիորդների պակասելը: Թէ ինչքան ստոյգ է այս, ևս չը գիտեմ (բայց սպասելի է):

Ամենայն օր դանդաղում է թէ ուսումնարան չը կայ, եղածուն էլ յառաջադիմութիւն չը կայ, տղայքը անկիրթ են մնում, բայց ոչ օք չէ հոգում, որ ուսումնարանի մէջ յառաջադիմութիւն լինի:

Քաղաքային ուսումնարանը այս վերջին երկու տարիները տարի կանգնել է: Այժմ սա մանկավարժական բաժին ունի (երկու տարի թոյլ տուութեամբ իբրև փորձ) և այս տարի վեց գիւղական ուսուցիչ դուրս եկան այն տեղից յաջող քննութեամբ: Այժմ այս ուսումնարանը խնդիր է ներկայացրել ուսումնական բարձրագոյն դարձնելու 25 գիւղերով իրենք պահելու, որոնցից 10-ը կառավարութեան հաշուով չբաւար աշակերտներից, իսկ 15-ը իրանց հաշուով: Նոր դրեկտորը մտադիր է եկող սեպտեմբերից քաղաքային վարժարանում, բայց եղած՝ չարթնական վեց դասերը տեղական լեզուից, նորէն վեց դաս ևս աւելացնել, այսինքն փոխանակ վեց դաս հայոց կամ թուրքաց լեզուից, շարթնական լինելու է տամեկուր: զաս: Արովհետև այս դասերի համար պէտք էր աւելորդ ուսուցիչները և քաղաքային վարժարանն էլ մասնաւոր դրամ չունէր (специальная сумма) վասն որոյ զիմեցին տեղոյս հասարակութեանը որ նոր դասերի համար ուսուցիչ ուսուցիչ, տարեկան 150-ից 200 ռուբլի, հասարակութիւնը վճարէ, բայց վերջինս մերժեց անելով, թէ կարողութիւն չունի: Այժմ թողնելը շամախեցոց, որ լաւ մտածեն իրանց ուսումնարանների վրա ու դառնանք արուեստագործութեանը: Շամախին իր հիմնվելուց ի վեր նշանաւոր է իր մեծաքանի գործաւորներով, բայց մտնելը սորա գործարանները: Ինչ կը տեսնենք: Չգոյ՛չ պէտք է լինել և ինամով մինչև գետին կուսանալ, որ կարողանա մտնելու, որովհետև դեռները շատ նեղ և ցածր են, ներքը խոնաւ և շերամի և թացութեան հոտն էլ զգուցելի կերպով թունաւորում են գործաւորների առողջութիւնը: գործիքները և գործելու եղանակը դեռ հին նախապետական են և այս պատճառով այս գործը ամենեւին յառաջադիմութիւն չէ անում: Գործաւորների տեսակներն էլ որոշ են և միայն գլուխ գործել՝ մի փոքր լայն, սպիտակ կամ կարմիր գոյնի հաստ չարսուներ և չապկացու ճոթեր, ուրիշ պատուէրներ չեն կարող ընդունել: Եթէ վարուց ու զարմէին այս բանի վրա, այժմ շատ յառաջադիմութիւն արած կը լինէին: Այժմ որ Շամախին տեսարական ճանապարհից դուրս պէտք է մնայ երկաթուղու գիծը անցնելուց յետոյ, հետևաբար և տեղոյս վաճառականութիւնը պէտք է ընկնի: միակ փրկու-

թիւնը քաղաքիս արուեստներին դիմելն է, զըլխաւորապէս մետաքսագործութեանը, յորում արդէն հեղինակութիւն էլ ունի: Արեւմտեան աւելի լաւ կը լինէր որ քաղաքային ուսումնարանին կից մի արուեստական մասը բանային այս արուեստը ծաղկեցնելու: համար, որով մեծ զարկ կարելի էր տալ երկրի անտեսական դրութեանը: Կամ եթէ թիֆլիսի դրամատէրերը կամ՝ Բագուի ընկերութիւնները կանոնաւոր գործարաններ բանային տեղս, աւելի շահաւէտ կը լինէր և մեր երկրի հարստութիւնը օտարազգաց ձեռքը չէր անցնի: Գուցէ երկրի ունենան երկրաշարժութիւններից, բայց փայտեայ շինութիւնները կատարել անվնաս են:

Շամախեցոց անտարբերութիւնը միայն այդքան չէ. նրանք հանգիստ ապրելու հոգն էլ չեն քաշում: Աւաւելիցնի առատութիւնը այստեղ միշտ եղել է և է իսկ, բայց ինչ է պատճառը այժմեան թանգութեան: Տեղոյս ալիւրածախները (ալիւրները) քաղաքային կշռի տակ եկած ալիւրները միանգամայն առնում են առաւօտը ժամի 5-էն (բայց մինչև կէսօրը իրաւունք չունեն) և իրանք էլ զարի ալիւր խառնելով կամ նոյն զարի ալիւրը ցորենի տեղ ծախում են քաղաքացւոց վրա: Ըստ ինչ հոգն է, Այժմ գիւղում ցորենի թաղարը (25 պուղը) 15 ռուբլով ծախվում է, բայց քաղաքում ալիւրի պուղը 1 ռ. 30 կուպէկ է. ինչ է պատճառը: Մտի խանութները աւելանում են, բայց միսը թանգանում է. ինչու համար:

Աւազակութիւնը և գողութիւնը սովորական են դարձել. մեծ աւազակագետը՝ որ քանիցս անգամ Արթրիայից փախած է և այժմ բռնված է՝ քաղաքային բանտում թագաւորական կեանք է վարում: Կատարել պետ է բոլոր աւազակներին և քանիցս անգամ փորձ են փորձել փախչելու, բայց չէ յաջողվել, իսկ զինուորներին ծեծել սովորական բան է դարձել նրանց համար: Ամայս 8-ին յայտնի աւազակագետը ազմուկ է բարձրացնում բանտում զինուորների հետ կրուշով: Տեղական զօրագունդից մի բոտա է գալիս գնդապետի հետ ու կուրը խաղաղացնում: ականատեսները պատմում են, որ յիշեալ աւազակագետը (ղօչին) երկու ապտակ է տալիս զընդապետին, իսկ նրա ընկերներից մէկը նոյն երեկոյն տեղոյս պրօկուրօրի օգնականի կողք դանակ է խրում: Չար լեզուները պատմում են նաև, որ աւազակագետը, փոխանակ պատժի, թէյ և շաքար պարգև է ստանում վարչական անձինքներից:

Քաղաքում օրը ցերեկով մարդ թակել, վիրաւորել, կոտորուցող սովորական է դարձած. արևահանգ կուրներ լինել նոյնպէս: Երէկ տեղոյս թուրքաց մասում դարձեալ արևահանգ կուրներ եղան. հրացանով վիրաւորվածներ շատ կան, և մեծ մասամբ հետաքրքիր նայողներից: Ոստիկանութիւնից միայն մի անձն սղդեցութիւն ունի կուրողների վրա. միւսները անկարող են. այս երևում էր երէկվայ կուրից, երբ յիշեալ մի աստիճանաւորի հարուածներից ամբողջ ցրվում էր, իսկ միւս ոստիկանական աստիճանաւորները իրանք փախչում էին: Ինչ է պատճառը որ տեղս յաճախակի անկարողութիւններ են լինում: Այստեղ լաւ իրադրութիւն է ժողովրդական առածը, թէ «կատուն եկել է մեր մարագունն ծնել, պահապանի հակողութիւնիցն է»:

Վերջապէս մեր շամախեցիք մինչև երբ պէտք է այսպէս սառնարտութեամբ և ուրիշի աչքերով մնային այս տեսակ զեղծունեներին: Մի բան միայն միտխարական է մեզ համար, այդ եղանակի դուրսաւալ լինելն է:

Ո՛նն

ՆԱՄԱԿ ԳՕՐՈՒՅ

Յուլիսի 15-ին

Գօրուց երկու վերստ հեռաւորութեամբ գտնվում է Տինիսիոյի գիւղը: Այս գիւղում կայ մօտ 20 տուն հայ բնակիչ և ունեն մի հայոց Ս. Աստուածածնայ եկեղեցի, որի երէցփոխանն է Ստեփան Թաւաքալեանը: Ամսիս 13-ին Գօրուց գնում են երկու քահանայ երէցփոխանից հայի պահանջելու: Այն ժամանակ սա գնացած է եղել հունձի և երբ քահանաները կանչում են սրբան, սա բոլորովին առողջ գնում է եկեղեցի և ներկայանում է քահանաներին: Հաշուից երևացել է, որ Թաւաքալեանցի մօտ գտնվում էր ե-

կեղեցու սեփականութիւն 80 ռուբլ. բայց սա մտաւ ունենալով այն փողերը, աւել է թէ «ինձ մօտ ոչինչ չը կայ»: Այս աւելում պէս երէցփոխանը ընկնում է յատակի վրա կիսամուկ և խկոյն զրկվում է տեսողութիւնից և յողութիւնից: Շատ աշխատում են սրան ուշքի բերել, բայց չեն կարողանում: Վերջապէս կիսամուկ երէցփոխանին եկեղեցուց տանում են, տուն սայլով, որտեղ մի քանի րօպէից յետոյ վախճանվում է:

Ամսիս 12-ին գիւղերը մի քանի անբարոյական երիտասարդներ նստած են լինում մի խանութում և գինի խմելիս են լինում: Սրանք բաւական լաւ են հարբել: Այս ժամանակ դեստատու կին տեսնելով որ խանութը անժամանակ բաց է և այնտեղ գինի են խմում, արգելում է այս և խանութատէրին ստիպում է, որ խանութը փակի: Այս ժամանակ երիտասարդների և դեստատուկի մէջ կռիւ է պատահում: Կուր նրանով է վերջանում, որ երիտասարդի մէկը խանչալով վիրաւորում է դեստատուկին: Կեստատուկին պառկած է հիւանդանոցում, իսկ վիրաւորողը բանտարկված է:

Գօրեցի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Վշակի» ներկայ համարը, մեզանից անկախ պատճառներով ուշացաւ:

Լսում ենք որ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը կամենում է պատասխանել, որ 3000 ռ. ամենին կորած չեն, այլ փոխարինաբար արբում են տէր Ղևոնդ քահանային: Հետաքրքիր է խմանալ երբ, ինչ թվին, որ օրը և ինչ համարով է կայացած հոգաբարձութեան այն օրադրը, որով վճարվեցաւ տալ Խարազեանց քահանային 3000 ռուբլ փոխարինաբար: Ուրիշ կողմից, ստում են, որ հոգաբարձուները իրանց մէջ վճար են մի երկու տարի ձրի ծառայեցնել տէր Ղևոնդին, որպէս կրօնուսոյց, անհետացած զուամբը նրա աշխատանքից դուրս զալու համար և այնուհետև արձակել նրան և ուսուցչութենից:

ՄՕԶԻՕԿԻՅ մեզ գրում են: «Յուլիսի 11-ին վերջացան տեղիս տղայոց և օրիորդաց դպրոցի հարգաքննութիւնները: Թէ տղաները և թէ աղջիկները մեծ առաջադիմութիւն ցոյց տուցին, մանաւանդ կրօնից, հայոց լեզուից և թուրքարանութիւնից: Այդ պատճառով հասարակութիւնը շնորհակալութիւն յայտնեց թէ հոգաբարձուներին և թէ այդ երեք աւարականների ուսուցիչներին: Գարբիէլ քահանայ Տուրփայեանին, Սարգիս Մէլքունեանին և Յարութիւն Ալիազեանին: Բայց պատմութենից, աշխարհագրութենից, ռուսաց լեզուից և մանաւանդ ընագիտութենից աշակերտներն ու աշակերտուհիները համեմատաբար աւելի թոյլ գտնվեցան»:

Թիֆլիսում հրատարակվող «Юридическое Общество» շաբաթագրի № 16 մէջ հրատարակվեցաւ մի ուշադրութեան արժանի յոդուած «Положение Бековъ въ Эриванской губерніи» (Բէկերի դրութիւնը Երևանեան նահանգում) վերնագրով: Յօդուածը մեծ չէ, բայց ճիշտ կիրպիլ ցոյց է տալիս Երևանեան նահանգի կարուածական խնդրի դեռ ևս անորոշ և խոտհալիթ դրութեան մէջ գտնվելը: Յօդուածի հեղինակը Ա. Յրէնկէն է:

Մի քանի օր առաջ լրագիրները հաղորդում էին, որ դիտաւորութիւն կայ գրկել Ս. Պետերբուրգի իդական բժշկական բարձրագոյն դպրոցը, կառավարչական նիւթական օժանդակութիւն իսկ այժմ հաղորդում են որ դիտաւորութիւն կայ, ընդհակառակն, ընդարձակել այդ դպրոցի ուսման ընթացքը:

Ատում են որ դիտաւորութիւն կայ յանձնել դիտաւորական գիտաղիաններ ժողովրդական ուսուարութեան միջնատրութեան իշխանութեանը, զարմնելով նրանց ընտրական գիտաղիաներ: